
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԱԾ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ (1843 – 1848 թթ.)

ԱՆԱՀԻՏ ՀԱԿՈՒՅՄԱՆ

Եվրոպացի ճանապարհորդների՝ դեպի Հայաստան ու Կովկաս կատարած ուղևորությունները շոշափվել են հայագիտության և կովկասագիտության մեջ գիտապատմական ու մի շարք այլ առումներով, ուստի դրանք մասամբ են վերաբերում ստորև ներկայացվող խնդիրներին: Մեր գլխավոր նպատակն է XIX դ. և նրան նախորդած ժամանակաշրջանի հենքի վրա լուսաբանել Հայաստան այցելած եվրոպական մտավորականների գիտական առնչությունները Խաչատուր Աբովյանի (1809–1848) հետ, ինչպես նաև ներկայացնել հայ մեծ լուսավորչի անձի ու գործի արժևորումը եվրոպական գիտության կողմից, որոնց քննությունը կարևոր նշանակություն ունի արքայանագիտության համար:

Հայաստանի նկատմամբ Եվրոպայի հետաքրքրությունը սկիզբ է առել տակավին Վերածննդի ժամանակաշրջանում, երբ երկիր էին այցելում դիվանագիտական պատվիրակություններ և առանձին ճանապարհորդներ: Ավելի ուշ՝ 1660–70-ական թվականներին, Հայաստանի մասին հիշատակություններ են թողել ֆրանսիացի ճանապարհորդներ Ժան-Բատիստ Տավերնիեն (1605–1689)¹ և Ժան-Բատիստ Շարդենը (1643–1713)²:

Հաջորդ երկու դարերում առանձնակի հետաքրքրություն էին հանդես բերում հնախոսության սիրահարներն ու հնագետները: 1810–16 թթ. Հայաստանում էր գտնվում անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիերը (1780–1849), որին հատկապես հետաքրքրել էին Գառնիի ավերակները³: Նրան հաջորդեց անգլիացի ճանապարհորդ և նկարիչ Ռոբերտ Կեր-Պորտերը (1777–1842): Նա այցելեց Դվինի (1817 թ.)⁴ և Գառնիի (1819 թ.)⁵ ավերակները, ծանոթացավ Էջմիածնի հոգևոր կենտրոնի պատմությանը⁶: Տասնամյա Խաչատուր Աբովյանը, որն այդ ժամանակ սովորում էր Էջմիածնի վանքում, անչափ տպավորվել էր եվրոպացի ճանապարհորդի այցելությանը և տարիներ անց, երբ գրում էր իր մանկապատանեկան հուշերը,

¹ J. B. Tavernier. Les Six Voyages en Turquie, en Perse, et aux Indes, 1–3 vol. Paris, 1676.

² Jean-Baptiste Chardin. Voyages du chevalier Chardin en Perse, et autres lieux de l’Orient, vol. II. Paris, 1811.

³ J. Morier. Second voyage en Perse, en Armenie et dans l’Asie Mineure 1810–1816, vol. II. Paris, 1818, p. 245–248; Հ ն վ հ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1934, էջ 341, 344:

⁴ Կ. Ղ ա Ֆ ա դ ա ղ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 18:

⁵ R. Ker-Porter. Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia, etc., during the Years 1817, 1818, 1819 and 1820, in 2 volumes, vol. II. London, 1822, pp. 624–629.

⁶ Հ ն վ հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 814–815:

ծրագրում էր անդրադառնալ նաև նրան⁷: Կեր-Պորտերի “Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylonia” գրքին նա ծանոթանալու էր արդեն Դորպատում⁸: Անգլիացու հետքերով 1830-ական թվականներին Հայաստանի վերոհիշյալ նշանավոր վայրերն այցելեց ֆրանսիացի ճանապարհորդ Ֆ. Դյուբուա դե Սոնպերյոն (1798–1850)⁹:

1829 թ. իր գիտական արշավախմբով Հայաստան ժամանեց Դորպատի կայսերական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան և տեսական ֆիզիկայի պրոֆեսոր Յոհան Ֆրիդրիխ Պարրոտը (1791–1841)՝ նպատակ ունենալով բարձրանալ Արարատի գագաթը¹⁰: Ծանոթությունն այս լայնախոհ և բազմակողմանիորեն զարգացած գիտնականի հետ, որ շրջադարձային եղավ Աբովյանի կյանքում, նորից տեղի ունեցավ էջմիածնում, ուր վանքի երբեմնի մոնյոն արդեն կաթողիկոսի թարգմանիչն ու գրագիրն էր¹¹: Նույն թվականի սեպտեմբերի 27-ին Աբովյանն ու Պարրոտը միասին պետք է հաղթահարեին Արարատի սառցե վահանը և համաշխարհային լեռնագնացության պատմության մեջ առաջին անգամ բարձրանային նրա գագաթը¹²:

Դորպատի համալսարանում ուսանելու տարիներին Բ. Աբովյանը հետևողականորեն ուսումնասիրում էր Հայաստանին առնչվող յուրաքանչյուր տպագիր աշխատություն՝ դրանք կարդալով բնագրերով¹³: Այդ գործում նրան մեծապես օգնում էին ժամանակի պարբերական մամուլն ու համալսարանի գիտական գրադարանը: Տավերնիեի, Շարդենի աշխատություններին Աբովյանը ծանոթանում է հենց այս ժամանակ¹⁴, իսկ, 1835 թ. գարնանը գերմանացի հայագետ Հ. Պետերմանին ուղղված նամակում անդրադառնալով Դյուբուայի՝ դեպի Անդրկովկաս ու Հայաստան կատարած ուղևորությանը, գրում է. «Պարոն Դիբուայ յուսամ, թե՛ ձգեսցէ զմտադրութիւն Եւրոպիոյ վասն Հայաստանի, թե՛ նա անտեղեակ գոլով լեզուին և պատմութեան Հայոց, այնքան սիրահար եղև հնուրեան նոցա, քանի՞ զմայլումն և բաւակաւնութիւն գտցէ, որ տեղեակն է այսոցիկ ամենայնի»¹⁵:

⁷ Աբովյանի ձեռագրերում պահպանվել է այդ առթիվ արված մի համառոտ նշում՝ “Der Englische Reisende” («անգլիացի ճանապարհորդը»). տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի արխիվ, -150, էջ 1:

⁸ Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. VI, Երևան, 1955, էջ 22, 136:

⁹ F. Dubois de Montpereux. Voyage autour du Caucase, chez les tcherkesses et les abchases, vol. III. Paris, 1839, p. 388; Կ. Ղաֆադյան. նշվ. աշխ., էջ 17:

¹⁰ Պ. Հակոբյան. Վերելք, Երևան, 1982, էջ 52–54:

¹¹ F. Parrot. Reise zum Ararat. T. I. Berlin, 1834, S. 84–85.

¹² Պ. Հակոբյան. Վերելք, էջ 112–128:

¹³ Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), Երևան, 1967, էջ 555–560:

¹⁴ Դորպատի համալսարանի գրադարանից Աբովյանը ընթերցելու համար վերցրել է Տավերնիեի և Շարդենի ուղեգրությունների հետևյալ հրատարակությունները. J. Baptista Tavernier. Beschreibung der Sechs Reisen... in Turkey, Persien und Indien... Durch Johann Herman Widerhold. T. I. Genf, 1681; Voyages du chevalier Chardin en Perse, et autres lieux de l’Orient. T. I–II. Amsterdam, 1711.

¹⁵ Խ. Աբովյան. ԵԼԺ, հ. X, Երևան, 1961, էջ 177–178:

Ձինված անհրաժեշտ գիտելիքներով՝ Դորպատից հայրենիք վերադարձած Խաչատուր Աբովյանը այնուհետև դառնում է ժամանակի ամենապահանջված մարդը Անդրկովկասում: Նրա հետ փափագում են ծանոթություն հաստատել այնպիսի ականավոր գիտնականներ ու մտավորականներ, ինչպիսիք էին Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, բնախույզ Մորից Վագները (1813–1887), պրուսական գաղտնի խորհրդական, տնտեսագետ Աուգուստ ֆոն Հաբստհաուզենը (1792–1866), Դորպատի համալսարանի պրոֆեսոր, երկրաբան Հերման Աբիխը (1806–1886), գերմանացի բանաստեղծ և թարգմանիչ Ֆրիդրիխ Բոդենշտեդը (1819–1892), արևելագետ Գեորգ Ռոզենը (1821–1891), Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր, բուսաբան Կարլ Կոխը (1809–1879), ռուս գրող և պատմաբան Անդրեյ Նիկոլանիչ Մուրավյովը (1806–1874) և շատ ուրիշներ՝ նպատակ ունենալով ստանալ Աբովյանի օժանդակությունն իրենց հետազոտական աշխատանքներում, քանզի նա, գիտելիքների համակողմանի իմացությունից բացի, տիրապետում էր եվրոպական բազմաթիվ լեզուների՝ ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, լատիներեն, ինչպես նաև գիտեր տեղական մի շարք լեզուներ՝ պարսկերեն, թուրքերեն, քրդերեն, վրացերեն և այլն, և այս վերջին հանգամանքը հատկապես կարևորվում էր նրանց շրջագայությունների ժամանակ: Այդ համատեղ գիտարշավները կազմակերպելու համար հիշյալ գիտնականները հաճախ դիմում էին Անդրկովկասյան երկրամասի իշխանություններին և խնդրում հանձնարարական նամակներ Աբովյանի անունով:

Աբովյանն իր «Поездка к развалинам Ани» ճամփորդական խորհրդածություններում գրում է. «...գիտական աշխարհը ինձնից բազմիցս զանազան տեղեկություններ է պահանջել՝ ինչպես պատմական, այնպես էլ, հատկապես, վիճակագրական, բուսաբանական, ժողովրդական լեզենդներ, հեքիաթներ և այլն: Չնայելով իմ դպրոցական պարապմունքներին, որոնք ինձանից խլում են համարյա ամբողջ գերեկը, այնուամենայնիվ, ես հաճույքով և շնորհակալությամբ կցանկանայի, ըստ իմ ուժերի ու գիտելիքների, բավարարել ինձ համար այնքան հրապուրիչ և հաճելի նրանց պահանջները: Բայց երգեր, լեզենդներ և բույսեր ու սերմեր հավաքելու, պատմական ավանդություններն ու փաստերը ստուգելու, ժողովրդի ամբողջ կենցաղը ճշմարտացի կերպով իմանալու համար պետք է ոչ թե մեկ օր, այլ շաբաթներով, հաճախ նաև ամիսներով ճամփորդել և ապրել այն վայրերում, որտեղից կարելի է քաղել տեղեկություններ...»¹⁶:

1843 թ. գարնանը Թիֆլիս է ժամանում բավարացի բնախույզ և ճանապարհորդ Մորից Վագները՝ նախապատրաստվելով ուղևորվել Հայաստան՝ հետազոտելու 1840 թ. երկրաշարժի հետևանքները, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի անձանոթ տեսակներ հայտնաբերել¹⁷: Ծանոթանալով Աբովյանի հետ և ստանալով նրա համաձայնությունը՝ Վագները դիմում է Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Ա. Բ. Նալդիարդին,

¹⁶ Խ. Աբովյան. ԵԼԺ, հ. VII, Երևան, 1956, էջ 150–151 [194]:

¹⁷ M. Wagner. Reise nach dem Ararat und dem Hochland Armenien. Stuttgart und Tübingen, 1848, S. 2, 148–149.

որպեսզի պաշտոնապես թույլատրվի Աբովյանին երեք շաբաթով ուղեկցելու իրեն առաջիկա ճանապարհորդության ժամանակ¹⁸:

Այդ ուղևորության ընթացքում նրանք լինում են Գուգարաց լեռներում և Կուր գետի ավազանում, հանգամանորեն ծանոթանում են Սևանա կղզու և նրա վանական շինությունների հետ, հիանում Սուրբ Առաքելոց վանքի քանդակագործ դռնով: Վագները արեղաներից զանազան տեղեկություններ է հավաքում լճի բնական պայմանների մասին: Այնուհետև այցելում են Երևանի նշանավոր բերդը, դիտում նրա մզկիթը, սարդարի հարեմն ու պալատը՝ իր որմնանկարներով, շրջում նրա այգում և Զանգուի ձորում, Երևանի հին բնակիչներից լսում սարդարի կյանքից զանազան դիպվածներ: Աբովյանն ու Վագները լինում են նաև Էջմիածնի վանքում, այցելում մատենադարան, իսկ ապա կատարում մի շաբթ շրջագայություններ Ակոռիի ձորում՝ պարզելու համար 1840 թ. երկրաշարժի և Ակոռի գյուղի ու Սուրբ Հակոբ վանքի կործանման հանգամանքները, այդ մասին հարցուփորձ անում մերձակայքի տարեց մարդկանց: «Մեծ երջանկություն էր վիճակված ինձ, որ այդ մարդկանց պատմածները թարգմանում էր մի այնպիսի կրթված անձնավորություն և հմուտ լեզվագետ, ինչպիսին իմ ուղեկից պարոն Աբովյանն էր», – խոստովանում է Վագները: Վերադարձին նրանք կանգ են առնում Հովհաննավանքում և սքանչանում այնտեղից բացվող տեսարանով, բարձրանում Արագածի հարավ-արևմտյան գագաթը¹⁹:

Նույն՝ 1843 թ. Աբովյանը ձեռնարկում է ևս մեկ գիտական ճամփորդություն՝ այս անգամ ուղեկցելով պրուսական գաղտնի խորհրդական, տնտեսագետ Ա. ֆոն Հաքստհաուզենին: Եվ դարձյալ պահանջվում է Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Ա. Բ. Նայդհարդի գրավոր կարգադրությունը՝ օտարերկրյա գիտնականին ուղեկցելու համար Աբովյանին մեկ շաբաթով պաշտոնից արձակելու վերաբերյալ²⁰: Այս ընթացքում բարոն Հաքստհաուզենը և Աբովյանը լինում են Երևանի բերդում, դիտում նոր ու հին ջրանցքները (Աբուհայաթի, Մամբուեի, Դալմայի, Նորագյուղի և այլն): Աբովյանը հանգամանալից բացատրություններ է տալիս քաղաքի ոռոգման եղանակների մասին: Միասին այցելում են Էջմիածին, Քանաքեռ, նրանից հյուսիս-արևմուտք ընկած եզիդիների քոչավայրերը: Աբովյանը, որն անձամբ զբաղվում էր քրդերի ու եզիդիների կենցաղի ուսումնասիրությամբ, այստեղ ևս առիթն օգտագործում է՝ հավելյալ նյութեր հավաքելով իր ապագա «Քրդեր և Եզիդիներ» ազգագրական աշխատության համար: Ինչպես խոստովանում է Հաքստհաուզենը, շնորհիվ Աբովյանի և նրա հորեղբայր Հարությունի հետ ունեցած բարեկամական փոխհարաբերությունների՝ եզիդիները որոշ մանրամասներ են պատմում գերմանացի գիտնականին իրենց ներքին կյանքի ու հավատալիքների մասին:

Այս օրերին Աբովյանը Հաքստհաուզենին է նվիրում Դորպատում գրած իր մանկապատանեկան հիշողությունները, ինչպես նաև նրան հաղորդում

¹⁸ Դիվան Խաչատուր Աբովյանի, կազմեց և ծանոթագրեց Ե. Շահազիզ, հ. II, Երևան, 1948, էջ 238–239:

¹⁹ M. Wagner. Նշվ. աշխ., էջ 5–6, 27–37, 62–70, 100–106, 111–113, 163–181, 208–212:

²⁰ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 64, թ. 6:

մի շարք հայ ժողովրդական ավանդություններ, հեքիաթներ ու առակներ: «Այդ և հաջորդ օրը, – գրում է Հաքստհաուզենը իր նշանավոր “Transkaukasien” գրքում, – ես ձեռք բերի նրանից (Աբովյանից – Ա. Ն.) հարուստ տեղեկություններ հայ ժողովրդի նիստուկացի, սովորությունների, հատկանշական գծերի ու հակումների մասին և դրանց շնորհիվ կարողացա շատ ավելի պարզ հասկանալ նրա ներքին կյանքը, քան եթե երբևէ ապրեի նրանց մեջ ամիսներ շարունակ: Աբովյանը մեկն էր այն ազնիվ, շիտակ և լրջախոտ բնավորություններից, որոնց մենք կյանքում հազվադեպ ենք հանդիպում: Կռահելով շատ շուտով, որ ես առհասարակ սիրով եմ ջանում խորամուխ լինել ժողովուրդների կյանքի մեջ, նա մեծագույն անկեղծությամբ բացատրեց ինձ ամեն ինչ և անգամ շատ առարկաների վրա հրավիրեց իմ հատուկ ուշադրությունը: Քանի որ ինքը Դորպատում չորս (պետք է լինի հինգ – Ա. Ն.) տարի ապրել էր գերմանացիների մեջ, ուստի ինքնըստինքյան նրա համար պարզ էին դարձել երկու ժողովուրդների ինչպես համանման, այնպես էլ հակադիր գծերը, և բավական էր միայն, որ ես նրան մի հարց տայի, շարժելի հետաքրքրությունը, վայրկենաբար արթնանում էին նրա մեջ մտքեր ու հիշողություններ, որոնք նա անմիջապես հաղորդում էր ինձ <...> Ստորև շարադրվածի համար մեծ մասով ես պարտական եմ նրան ու հետո միայն իմ սեփական դիտողություններին, որոնք նմանապես մասամբ կատարել եմ նրա ղեկավարությամբ»²¹:

1844 թ. հունվարին Ռուսական կայսրությունը Դորպատի համալսարանի պրոֆեսոր Հերման Աբիխին գործուղում է Հայաստան՝ ուսումնասիրելու նրա երկրաբանական առանձնահատկությունները: Դեռևս Պետերբուրգում Աբիխը այցելում է կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն և խնդրում համապատասխան աջակցություն: Վեհափառը, ընդառաջելով գերմանացի գիտնականին, հանձնարարական նամակներ է տալիս Աբովյանի և Էջմիածնի կառավարիչ Բարսեղ արքեպիսկոպոսի անուններով²²: Իր հերթին, Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Ա. Բ. Նայդհարդը կարգադրում է դպրոցների վերատեսչությանը՝ Երևանից Թիֆլիս կանչել Աբովյանին, որպեսզի նա Աբիխի հետ որոշի Հայաստանում կատարելիք հետազոտությունների ժամանակն ու ուղեգիծը²³: Հարգաստներին ուղղված նամակում Աբիխը Աբովյանի մասին հետևյալ ուշագրավ տողերն է գրել. «Աբովյանը <...> պետք է որ հայտնի լինի Ձեզ Պարբոտի ճանապարհորդությունից. նա Հայաստանում չափազանց հարգված, մինչև իսկ հռչակավոր մարդ է, որն այրվում է իր ժողովրդի սիրուց և իր ողջ եռանդը նվիրաբերել է ազգի լուսավորությանը»²⁴:

Մինչ Աբիխը կժամաներ Թիֆլիս, և կստացվեր Անդրկովկասի գլխավոր կառավարչի կարգադրությունը, մարտի 23-ին Երևան են հասնում գերմանացի

²¹ A. von Haxthausen. Transkaukasien., T. I. Leipzig, 1856, S. 170–184, 191, 230–237, 259–260, 316–335; А. Ф о н Г а к с т г а у з е н. Закавказский край. СПб., 1857, ч. I, с. 165–176, 182, 194, 217–228, ч. II, с. 3–6, 58–73.

²² Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Գաթողիկոսական դիվան, - 110/141, թ. 1ա: H. Abich. Aus Kaukasischen Ländern, B. I. Wien, 1896, S. 17, 25.

²³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 780, թ. 1–2:

²⁴ H. Abich. Նշվ. աշխ., էջ 64:

գիտնականներ Ֆրիդրիխ Բոդենշտեդն ու Գեորգ Ռոզենը և հաջորդ օրն ևեթ այցելելով Աբովյանին՝ խնդրում առաջնորդել իրենց Հայաստանում կատարելիք շրջագայությունների ժամանակ, որ նա սիրով հանձն է առնում: Միասին լինում են Երևանի բերդում, դիտում սարդարի պալատը, նրա հայելապատ դահլիճը, այնուհետև ուղևորվում են Էջմիածին և աշխատում վանքի մատենադարանում: Ընդառաջելով Բոդենշտեդի թախանձանքներին՝ այդ և հաջորդ տարվա ընթացքում Աբովյանը հավաքում, ծանոթագրում, թարգմանում և նրան է ուղարկում Երևանյան գավառում տարածված հայկական, քրդական ու թուրքական ժողովրդական երգերի մի ժողովածու՝ Գերմանիայում հրատարակելու համար²⁵:

Ապրիլի 11-ին Աբովյանը ժամանում է Թիֆլիս²⁶՝ Հերման Աբիխին Հայաստան ուղեկցելու համար: Այդ ընթացքում Թիֆլիսում նա հանդիպումներ է ունենում նաև հայտնի բուսաբան, պրոֆ. Կարլ Կոխի հետ՝ նրան արժեքավոր տեղեկություններ հաղորդելով հայկական երաժշտական գործիքների ու խոհարարական արվեստի մասին²⁷:

Ինչ վերաբերում է Աբովյանի և Աբիխի համատեղ գիտարշավին, ապա այն, սկսվելով 1844 թ. ապրիլի 28-ին, շարունակվում է մինչև սեպտեմբերի կեսերը: Այդ ընթացքում նրանք լինում են Դիլիջանում, Սևանի ավազանում, Գութանասարի ստորոտում, Քանաքեռում, Էջմիածնում, Կողբում, Գեղարդում, Գառնիում, դիտում ամրոցի պարիսպներն ու տաճարի ավերակները, որոնք իրենց վեհությամբ Աբիխին հիշեցնում են հին Հռոմի հուշարձանները: Աբովյանը գերմանացի գիտնականին հաղորդում է տեղեկություններ Գառնիի տաճարի կառուցման մասին՝ հայտնի հայ միջնադարյան պատմագրությունից: Շրջագայությունները շարունակվում են Նախիջևանում, Հին Ջուղայում, Ագուլիսում, Ղարաբաղում, Մեղրիում, Մակուում, Արծափում, Բազավանում, Հին Բայազետում: Այստեղ ևս Աբովյանը շարունակում է ուսումնասիրել քրդերի կյանքն ու կենցաղը՝ նյութեր հավաքելով իր ազգագրական ուսումնասիրությունների համար: Այնուհետև արշավախումբը դիմում է Դիադինի հոչակավոր ջերմուկները, դիտում գետի վրա կրաքարերից գոյացած բնական կամուրջը, այցելում պատմական Արտազ գավառի Սուրբ Թադեի վանքը, որտեղ Աբովյանը պատմում է Աբիխին նրա կառուցման մասին հին ավանդությունը:

Գերմանացի երկրաբանը ծրագրել էր ոչ միայն շրջագայել պատմական Հայաստանի տարածքում, այլև բարձրանալ Արարատի գագաթը: Արշավախումբը երեք անգամ վերելքի փորձ է կատարում, սակայն երեք անգամն էլ Մասիսի գագաթին մոլեզնած խելահեղ փոթորկի պատճառով մատնվում է անհաջողության՝ գտնվելով լեռան կատարին չափազանց մոտ: Փոխարենը երկու անգամ հաջողվում է բարձրանալ Փոքր Մասիսի գագաթը, որտեղ Աբիխն ու Աբովյանը կատարում են անկյունային չափումներ²⁸:

²⁵ F. Bodensiedt. Tausend und Ein Tag im Orient, B. II. Berlin, 1850, S. 145–159, 161–164, 263–265. *Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. VII, էջ 339–357, 433–442:*

²⁶ *Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. X, էջ 267:*

²⁷ K. Koch. Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, B. III. Weimar, 1847, S. 77.

²⁸ H. Abich. Նշվ. աշխ., էջ 66–99, 109–122, 129–141, 157:

Երևանում անցկացրած օրերին Աբովյանը պրոֆ. Աբիխի խնդրանքով կատարում է «օդերևութաբանական ու ծանրաչափական դիտողություններ և ջերմաստիճանի ու խոնավության չափումներ»²⁹ (ինչպիսիք պարբերաբար կատարում էր Դորպատից վերադառնալուց հետո, պրոֆ. Ֆ. Պարրոտի հանձնարարությամբ): Ի դեպ, մինչև 1848 թ. փետրվարը նա շարունակում է այդ հետազոտությունները՝ արդյունքներն ուղարկելով Աբիխին: Աբովյանին ուղղված նրա նամակներից մեկում կարդում ենք. «Եթե Դուք ձեռք կատարել եք որոշ ուղղակի և վստահելի դիտողություններ, ապա գործի օգտից ելնելով՝ կխնդրեի շուտափույթ ինձ ուղարկել կցելով դրանց նաև մի կարճ բնութագիր Երևանի մթնոլորտային պայմանների մասին դեկտեմբեր և հունվար ամիսներին, որպեսզի նրանք տեղ գտնեն այն ամփոփման մեջ, որ վերաբերում է 1847/48 թթ. ձմռանը...»³⁰:

Օդերևութաբանական դիտարկումներին զուգահեռ՝ 1845 թ. ընթացքում Աբովյանը չի դադարում զբաղվել իր ազգագրական ուսումնասիրություններով: Այդ ժամանակահատվածում նա անգլերենից հատվածաբար զբաղվում է թարգմանում ամերիկացի միսիոներներ Սմիթի և Դվայթի ուղեգրական երկից³¹ վեց նամակ՝ նվիրված Թիֆլիսի, Էջմիածնի, Ջանգեզուրի, Ղարաբաղի հայերին՝ խորագրելով «Հատուածք ի նամակաց երկուց պատուելի ամերիկացի ճանապարհորդաց պարոն Սմիթի և Դվեյթի, ի կողմանս Հայաստանի և Պարսկաստանի յախ 1830–1831. թարգմանություն յանգլիական բարբառոյ ի Հայս»³²: Ապա Սուրբ Ծննդյան տոներին շուրջ երկու շաբաթ, «ամենադաժան ձմռանը» իր հաշվին ձեռնարկում է ուղևորություն դեպի քրդերն ու եզիդիները՝ ուսումնասիրելու նրանց կենցաղը³³: Այս հետազոտական աշխատանքի արդյունքն է դառնում Աբովյանի գերմաներեն «Die Kurden und Jeziden» («Քրդեր և Եզիդիներ») պատմա-ազգագրական ուսումնասիրությունը, որի շարադրանքն ավարտվում է 1846 թ. կեսերին: Ըստ հայագետ Պ. Հակոբյանի՝ մեզ հասած սևագիր տարբերակից բացի եղել է երկու մաքրագիր, ավարտված օրինակ՝ ավելի հղկված ու մշակված, որոնք ունեցել են կառուցվածքային և բովանդակային որոշակի տարբերություններ: Դրանցից առաջինը Աբովյանն ուղարկել է Սյունիսեն՝ Մ. Վազներին, իսկ երկրորդը հանձնել Կովկասի փոխարքայի գրասենյակին: «Վերոհիշյալ երկու ձեռագրերն էլ այն ձևով, ինչպես դուրս են եկել Աբովյանի գրչի տակից, չեն տպագրվել, – գրում է Պ. Հակոբյանը: – Վազները հատվածաբար վերապատմել է գործի բովանդակությունը 1852 թ. լույս տեսած իր «Reise nach Persien und dem Land der Kurden» գրքի 2-րդ հատորի հավելվածում <...> Փոխարքայի գրասենյակում եղած ձեռագրի միայն մի մասը, որ վերաբերում էր քրդերին, Աբովյանի անհայտացումից հետո անցել է «Кавказ» թերթի խմբագրությանը, որ ռուսերեն

²⁹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 73, թ. 69 բ:

³⁰ Դիվան Խաչատուր Աբովյանի, հ. II, էջ 186–187:

³¹ E l i S m i t h and H. G. O. D w i g h t. Missionary Researches in Armenia. London, 1834.

³² Խ. Աբովյան. ԵԼԺ, հ. VII, էջ 301–306, 478–481

³³ Խ. Աբովյան. ԵԼԺ, հ. VIII, Երևան, 1958, էջ 151 [194–195]:

թարգմանությամբ լույս է ընծայել այն 1848 թ. վերջին համարներում, հայտնի չէ, թե որքանով հարազատ մնալով բնագրին»³⁴:

1846 թ. սեպտեմբերի սկզբին Երևանում Աբովյանը ծանոթանում է անգլիացի ճանապարհորդ Հենրի Դեմբի Սեյմուրի հետ, որը խնդրում է ուղեկցել իրեն դեպի կործանված Ակոռի գյուղը՝ տեսնելու 1840 թ. երկրաշարժի ավերածությունները: Մի քանի օր անց միայն Աբովյանը տեղեկանում է Սեյմուրի բուն մտադրությանը՝ բարձանալ Արարատի գագաթը³⁵: Վերելքը պսակվում է հաջողությամբ, և սեպտեմբերի 18-ին Աբովյանին հաջողվում է երկրորդ անգամ բարձրանալ Մեծ Մասիսի գագաթը: «Այս անգամ բախտը կամեցավ ինձ շնորհել մարդկային ցեղի նախահոր սրբազան բնակավայրին առաջինը երկրպագելու երջանկությունը», – գրում է Աբովյանն իր ՝ ՏՏՏԿ ՉՏրԻՏՁՊԿՎՈՒԿ ՎՈ ԸՐՈՐՈՑԵ հոդվածում³⁶:

Ուղիղ մեկ ամիս անց Աբովյանը Երևանում հանդիպում է ռուս գրող, պատմաբան Անդրեյ Մուրավյովին, որը կանգ էր առել սարդարի պալատում: Նրա «անձնական խնդրանքով» համաձայնում է «սենեկապետ Մուրավյովին» ուղեկցել Հայաստանի մի քանի հնավայրեր³⁷: Հոկտեմբերի 20–28-ը տևած շրջագայությունների ժամանակ նրանք լինում են Այրիվանքում, Գառնիում, Գեղարդում, որտեղ Աբովյանը ռուս գիտնականին հաղորդում է Գեղարդավանքի մասին ժողովրդական երկու ավանդություն, այցելում են Դվինի և Արտաշատի ավերակներ, Խորվիրապ վանքի զատիվայրը բարձրանալով ոտքով, իջնում են այն հորը, ուր, ըստ ավանդության, տասներեք տարի բանտարկել են Գրիգոր Լուսավորչին: Երբ դիմում են Արարատ, նրանց հետևից շարժվող քոչվոր քրդերն առիթ են դառնում, որ Աբովյանը Մուրավյովին հաղորդի մի շարք տեղեկություններ եզրիղիների կենցաղի ու սովորույթների մասին³⁸: Վերջապես դիտում են կործանված Ակոռի գյուղի ավերակները: «Մեծ դժվարությամբ ժայռերի վրայով մենք բարձրացանք այն վայրը, ուր ժամանակին կանգնած էր Սբ. Հակոբի վանքը, բայց արդեն չկարողացանք առաջ գնալ դեպի մի վերստ հեռու գտնվող նրա աղբյուրը», – իր ճամփորդական նոթերում գրում է Ա. Ն. Մուրավյովը³⁹:

Այս ուղևորության ընթացքում Աբովյանը, թերևս ընդառաջելով Մուրավյովի խնդրանքին, գրում է ռուսերեն համառոտ պատմական ակնարկներ Հայաստանի մայրաքաղաքների մասին («Артакаста», «Двин», «Ани», «Акори или Арк-ури (насаждение лозы)», «О храме Кечаруйк», «Краткий исторический очерк города Эриван») և Էջմիածնում հանձնում նրան⁴⁰:

³⁴ Նույն տեղում, էջ 424–425:

³⁵ Այդ վերելքի մանրամասները տե՛ս Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, Մ. Ա. Ս. Էջմիածին, 1997, էջ 314–346:

³⁶ Իւ. Աբովյան. ԵԼԺ, հ. VII, էջ 69 [75]:

³⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 2212, թ. 26:

³⁸ А. Н. Муравьев. Грузия и Армения, т. II. СПб., 1848, с. 12– 13, 108 – 122, 126– 137, 140– 148, 151– 156.

³⁹ Նույն տեղում, էջ 140–141:

⁴⁰ Այդ ինքնագիրը, որ Մուրավյովը գրեթե ամբողջությամբ փոխադրել է իր գրքում՝ առանց նշելու հեղինակի՝ Աբովյանի անունը, 1960-կան թվականների սկզբին հայտնաբերել է Պ. Հակոբյանը Ուկրաինայի Հանրապետության ԳԱ Տ. Շնչենկոյի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրերի բաժնում (տե՛ս Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Աբովյանի Կիևյան ձեռագիրը. – ՀՄՄՈ ԳԱ Տեղեկագիր, 1962, - 9, էջ 49–64):

Բազմաթիվ գիտարշավների ու այցելությունների արդյունքում Աբովյանը Երևանի գավառական դպրոցում հիմնադրում է բնապատմական կաբինետ, որտեղ նախատեսված էր հավաքել Հայաստանի անցյալին վերաբերող զանազան հնություններ: Հավաքածուն ընդգրկում էր Գառնիի տաճարի լավ պահպանված չորս խոյակներ, երկրաբանական զանազան նմուշներ՝ սպիտակ մարմարի կտորներ, Արագածից բերված ծծումբ, հրաբխային ապակու և պղնձի հանքակտորներ և այլն⁴¹:

Դատելով Աբովյանի գործունեության ասպարեզներից և նախասիրություններից՝ հայ իրականության մեջ նա առաջինն էր մի շարք գիտությունների արմատավորման ու զարգացման խնդրում. նա հմուտ լեզվաբան էր, թարգմանիչ, բանահավաք-բանագետ, պատմաբան, ազգագրագետ, հետախույզ-հնագետ, վիմագրագետ, երկրաբան, աշխարհագրագետ, ճանապարհորդ, լեռնագնաց, և սրանով չեն սպառվում մասնագիտական այն ունակությունները, որոնք Աբովյանն ի սպաս դրեց հանուն հայրենիքի հոգևոր վերածննդի: Սա նկատել են նաև նրա հետ Հայաստանը հետազոտող եվրոպական մտավորականները՝ բարձր գնահատելով Աբովյանի գիտելիքներն ու ծառայությունները Եվրոպայի կողմից Հայաստանը ճանաչելու գործում: «Եթե Հայաստանն ունենար հարյուր մարդ էլ, որոնք նրա նման կատարյալ կրթություն և նույնպիսի բարի կամք ունենային, ապա երկիրը շուտով մեծ բարեփոխումներ կվայելեր, և Ռուսաստանը կարող էր հպարտությամբ նայել իր հեռավոր կալվածքների մարգարիտներին», – Աբովյանի մասին գրել է Կարլ Կոխը⁴²:

Իրավամբ, ճակատագրական եղան Խաչատուր Աբովյանի ու եվրոպական գիտնականների, ըստ էության՝ Հայաստանի ու Եվրոպայի առաջին սերտ շփումները հայկական հողի վրա, Հայաստանի վերագնահատման ու զարգացման գործում: Սա ուսանելի և այժմեական է նաև մեր օրերում, երբ կրկին բացվել են դռներ հայ-եվրոպական բազմակողմանի առնչությունների համար:

ВЗАИМООТНОШЕНИЯ ХАЧАТУРА АБОВЯНА С ПОСЕТИВШИМИ АРМЕНИЮ
ЕВРОПЕЙСКИМИ УЧЕНЫМИ (1843–1848 гг.)

АНАИТ АКОПЯН

Резюме

Начиная с эпохи Возрождения Армения находилась в сфере интересов европейских ученых и путешественников. Организуемые на Армянское нагорье экспедиции имели целью разностороннее изучение Армении. Миссия сближения Запада и Армении в первой половине XIX в. была возложена на

⁴¹ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1723, թ. 1–6:

⁴² К. К о х. Եզվ. աշխ., էջ 75–76:

плечи великого армянского писателя и мыслителя Хачатура Абовяна (1809–1848): кроме энциклопедических знаний, полученных во время учебы в разных центрах Закавказья и в Дерпте, Абовян владел многими европейскими и ближневосточными языками, являясь в силу этого незаменимым сотрудником для западных и русских ученых на Востоке. Хачатур Абовян сотрудничал с рядом известных европейских ученых: М. Вагнером, А. фон Гакстгаузеном, Г. Абигом, Ф. Боденштедтом, Г. Розеном, К. Кохом, А. Муравьевым. Эти контакты охватывают последние годы жизни и творчества Абовяна (1843–1848), когда Х. Абовян был вовлечен в разные сферы деятельности, будучи востребованным как писатель, лингвист, опытный переводчик, фольклорист, историк, этнограф, археолог-разведчик, эпиграфист, геолог, географ, а также путешественник и незаурядный альпинист. Воистину неocenимы заслуги Х. Абовяна перед европейской культурой для установления по сути первых и перманентных контактов между Западом и Арменией, а также его старания в развитии и переосмыслении роли Армении в мировой культуре и истории, что засвидетельствовано в европейской литературе.

KHACHATUR ABOVYAN'S INTERRELATIONS WITH EUROPEAN SCHOLARS HAVING VISITED ARMENIA (1843–1848)

ANAHIT HAKOBYAN

Summary

Beginning from Renaissance Armenia has permanently been in the scope of European travellers and scholars, and scientific expeditions were continuously organized to investigate the country. Particularly, in the first half of the 19th century, Khachatur Abovyan (1809–1848) – an Armenian outstanding writer and scholar, – who wielded encyclopedic knowledge and many of European and Near Eastern languages, undertook hard mission of rapprochement of both the West and Armenia. Khachatur Abovyan collaborated with such distinguished European scientists, as M. Wagner, A. von Haxthausen, H. Abich, F. Bodenstedt, G. Rosen, K. Koch, A. Muravyev and others, whose activities in Armenia dated from 1843 to 1848. This period Abovyan acted in different branches – a writer, a linguist, an experienced translator, a folklorist, a historian, an anthropologist, a person well surveying archaeological sites, as well as an epigraphist, a geologist, a geographer, a traveller and a mountaineer capable of great endurance. One can – according to sources – appreciate Abovyan's inestimable contribution to the European culture, as well as his role to promote contacts for development and reevaluation of Armenia.